

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՆ.....	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES.....	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՐԻ ՄԻ ՃՇՊՐՏՈՒՄ.....	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ.....	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16 TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER.....	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905).....	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.....	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S.....	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.).....	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994).....	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ.....	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ).....	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՄԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ... 104	104
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА.....	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ).....	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.).....	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019).....	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY /	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY).....	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՄԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ.....	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարքաշեղծությունները..... 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ..... 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.... 188

Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205

Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)..... 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD..... 236

Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈՒՆԴՈՒԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԿՈՒԵՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆԿԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ..... 237

Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES..... 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԶՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:.....

247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:.....

247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԶԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:.....

250

ՆՈՐ ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.)..

252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ.....

255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ.....

258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021).....

263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Վահագն Յակոբյան

ԴՎԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հիմնաբառեր. Դավիթ Անանուն, Աշոտ Յովհաննիսյան, Կարեն Միքայելյան, Նիկողայոս Տեր-Մանվելյան, ընկերություն, սպեցիֆիկներ:

Յրապարակվող նամակները հանրահայտ սոցիալ-դեմոկրատ, մարքսիստ պատմաբան և հրապարակախոս Դավիթ Անանունի (1880-1943) ծավալուն նամակագրության մի փոքր մասն են կազմում: Դրանք հատուկ ընտրվել են անվանի պատմաբան, պետական գործիչ, 1922-1927 թթ. Խորհրդային Յայաստանի կուսակուսի կենտկոմի քարտուղար Աշոտ Յովհաննիսյանի (1886-1972) հետ Դ. Անանունի հարաբերությունների բնույթը, ինչպես նաև նրա ճակատագրում այդ հարաբերությունների խաղացած դերը լուսաբանելու մտադրությամբ:

Ներկայացված նամակները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Դ. Անանունի և Ա. Յովհաննիսյանի միջանձնային հարաբերությունների մասին և միաժամանակ նպաստում Յայաստանի ու Այսրկովկասի 1910-1920-ական թթ. հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ մեր պատկերացումների ընդարձակմանը:

Յայտնի մարքսիստ պատմաբան, հրապարակախոս ու սոցիալ-դեմոկրատ Դավիթ Անանունի (1880-1943) նամակագրությունից ստորև ներկայացվող նմուշները ընտրված են նշանավոր պատմաբան և պետական-կուսակցական գործիչ Աշոտ Յովհաննիսյանի հետ նրա հարաբերությունների բնույթը պարզաբանելու, ինչպես նաև Դ. Անանունի ճակատագրում դրանց խաղացած դերն ու ազդեցությունը լուսաբանելու մտադրությամբ:

Յրապարակվող նամակները ուշագրավ տեղեկություններ են պարունակում նշված երկու գործիչների միջանձնային հարաբերությունների, 1910-1920-ական թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ, ինչպես նաև նպաստում են տվյալ ժամանակաշրջանի մասին մեր պատկերացումների ընդլայնմանը:

Յայտնի գրականագետ Յայկ Գյուլիքեհյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Աշոտ Յովհաննիսյանի գրած հուշերից կարելի է ենթադրել, որ Դ. Անանունի հետ նրա առաջին առնչությունները վերաբերում են ռուսաստանյան Առաջին հեղափոխության շրջանին, երբ վերջինիս կյանքի աշակերտական տարիներին Դ. Անանունը այլ գործիչների հետ այցելել է Շուշիի ռեալական դպրոց ու հանդես եկել դասախոսություններով, մասնակցել բանավեճերի¹: Յաշվի առնելով այն, որ Ա. Յովհաննիսյանը, նրա ավագ եղբայր Յակոբ Յովհաննիսյանը և Դ. Անանունը Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՍԴԲԿ)^{**} անդամներ էին, կարելի է ենթադրել, որ նրանց միջև անձնական հարաբերությունները ձևավորվել են այս փուլում ու ունեցել կուսակցական, գաղափարական ուղղվածություն:

Նրանց փոխհարաբերությունների հետագա ընթացքի մասին մինչև 1915 թ. մենք տեղեկություններ չունենք: Յայտնի է, որ Ա. Յովհաննիսյանը 1906-1913 թթ. ուսանելու նպատակով հիմնականում գտնվել է Գերմանիայում, իսկ Դ. Անանունը ապրել ու գործել է Բաքվում: 1915-1917 թթ. Ա. Յովհաննիսյանի կողմից Դ. Անանունին գրած նամակների բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ նրանց հարաբերությունները զարգացել, վերաճել են բարեկամության, իսկ նշված տարիներին, թեև մասնագիտական՝ պատմագիտական հարցերում

* Հոդվածը ներկայացվել է 16.04.2021 թ., գրախոսվել՝ 19.04.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

¹ Յովհաննիսյան Ա., *Յուշեր անցյալից (Յայկ Գյուլիքեհյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)*, «Երաբեր հասարակական գիտությունների», 1966, թիվ 3, էջ 69: Նաև Նույնի՝ *Յուշեր և բնութագրումներ*, Ե., 1969, էջ 81:

** ՍԴԲԿ-ն ստեղծվել է 1903 թ. հոկտեմբերին Բաքվում: Նրա անդամները հայ հրականության յուրահատուկ (специфук) պայմանները հաճախակի ընդգծելու համար անվանվել են նաև սպեցիֆիկներ:

Նրանք ունեցել են որոշակի փոխըմբռնում, հասարակական-քաղաքական, գաղափարական հարցերում արդեն նկատվել են որոշակի տարաձայնություններ: Հետագա տարիներին Դ. Անանունի ու Ա. Հովհաննիսյանի հարաբերությունների առանցքը նրանց ընկերական մտերմությունն էր, իսկ մնացած հարցերում անհամաձայնություններն ընդլայնվում են:

Հայաստանում բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո Դ. Անանունը, ի տարբերություն իր կուսակից ընկերների, արդեն լուսավորության ժողովում, ապա ՀԿ(Բ)Կ ԿԿ քարտուղար Ա. Հովհաննիսյանի հետ մտերիմ հարաբերությունների շտրիիվ, հետապնդումների չի ենթարկվում: Նա 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. հուլիս ամիսներին գրող Ստեփան Չորյանի հետ միասին ապրել է Ա. Հովհաննիսյանի բնակարանում¹: Հետագայում տրված իր ցուցմունքում Դ. Անանունը նշել է, որ, ինչպես ընդհանուր ընտանիք, ապրելով միևնույն տանը՝ նրանք ունեցել են ընդհանուր սեղան, միասին են թեյել, բանավիճել և գիշերը դռները չեն փակել, այսինքն՝ նրանք այնքան մտերիմ են եղել, որ Ա. Հովհաննիսյանը Դ. Անանունին վտանգի չենթարկելու համար նրան պատասպարել է իր բնակարանում, ու ապրել են ընդհանուր կենցաղով: Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո՝ 1921 թ. հուլիսին, թերևս Ա. Հովհաննիսյանի միջամիտությամբ կամ գիտությամբ, Դ. Անանունը Էջմիածնի կուլտուրապատմական ինստիտուտի* հրավերով անցնում է գիտական աշխատանքի²: Այս շրջանում նրանց ջերմ հարաբերությունների բնույթի մասին վկայող հետաքրքիր ցուցիչ է Ա. Հովհաննիսյանի առաջին կնոջ՝ Վարյայի (Վարվառա Կարպովա Բեչեգոյան) 1922 թ. դեկտեմբերի 22-ին Դ. Անանունին գրած նամակը, որում նա հայտնում է, որ կարոտել է Դ. Անանունին, շտրիհավորում է գալիք ամանորի կապակցությամբ ու հրավիրում իրենց տուն³:

Մինչև 1920-ական թթ. կեսերը, երբ սպեցիֆիկյան կուսակցության բովով անցած գործիչները Ա. Մյասնիկյանի, Ս. Լուկաչինի ու Ա. Հովհաննիսյանի գլխավորած խորհրդային Հայաստանում առաջատար դերակատարներ էին, Դ. Անանունը, չնայած որոշ անախորժ հարձակումներին, զգալի հաջողություններ է ունենում: Նա, Ա. Հովհաննիսյանի երաշխավորությամբ⁴, 1923 թ. փետրվարին նշանակվում է խորհրդային Հայաստանի հեղափոխության թանգարանի վարիչ, նրա նախաձեռնությամբ 1925 թ. հունիսի 11-ին և 13-ին մասնակցում Լուսժողովմատի շենքում հրավիրված պատմաբանների խորհրդակցությանը, որի նպատակը հայոց պատմության ձեռնարկի ծրագիր կազմելն էր⁵: Դ. Անանունն ընտրվել է նաև Գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնի անդամ (1926 թ.), և այս փուլում են տպագրվել նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը» վերտառությամբ աշխատության երկրորդ ու երրորդ հատորները (1922, 1926 թթ.):

Ներկայացված իրավիճակը աստիճանաբար սկսվում է փոխվել 1920-ական թթ. երկրորդ կեսին թե՛ համամիութենական, թե՛ անդրկովկասյան ու հայաստանյան մակարդակներում տեղի ունեցած գործընթացների ազդեցությամբ: Վերջինների պարագայում Ա. Մյասնիկյանի ողբերգական մահվանից հետո խորհրդային Հայաստանի՝ սպեցիֆիկյան անցյալ ունեցող դեկավար գործիչների նկատմամբ օղակը գնալով սեղմվում է, ինչը, ի վերջո, բերում է նրան, որ այդ գործիչների մեծ մասը, այդ թվում՝ Ա. Հովհաննիսյանը, 1927-1928 թթ. պաշտոնազրկվում ու հեռացվում է ասպարեզից: Բայց մինչ այդ, քանի դեռ նրանք առաջացած դժվարությունները հաղթահարելու հույսեր ունեին, թույլ են տալիս, որ Դ. Անանունը պաշտոն-

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1191, ց. 13, գ. 670, թ. 31, գ. 16, գ. 67, թ. 125:

* Էջմիածնի կուլտուրապատմական ինստիտուտը ստեղծվել է կառավարության 1921 թ. փետրվարի 5-ի դեկրետով: Նույն թվականի մայիսի 26-ից ինստիտուտն սկսում է կոչվել Էջմիածնի գիտական ինստիտուտ (տե՛ս Տեր-Մինասյան Ե., Հուշեր իմ կյանքից, խմբ.՝ Պ. Մուրադյան, Ե., 2005, էջ 100-104):

² Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դ. Անանունի ֆոնդ, վավ. 81, թ. 2, վավ. 111, թ. 12:

³ ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 94, թ. 1:

⁴ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 67, թ. 125:

⁵ Հակոբ Մանանդյանի թղթերից, հրատարակեց Պ. Հովհաննիսյանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 2, էջ 128-130:

Նագրվյալի ու հալածանքների ենթարկվյալ, այնինչ կարող էին թողնել նրան հեռանալ Խորհրդային Հայաստանից: Արդյունքում Դ. Անանունը ձերբակալվում է և երկար տարիներ անցկացնելով աքսորավայրերում՝ թշվառ պայմաններում 1943 թ. կնքում է իր մահկանացուն: Այս առումով պատահական չէ, որ 1928 թ. օգոստոսի 28-ին գրող Կարեն Միքայելյանին ուղղված նամակում իր վիճակի համար Դ. Անանունն առաջին հերթին մեղադրում է իր ընկերներին, իսկ Ա. Հովհաննիսյանին անվանում է «սևերես Աշոտ»: Ի դեպ, ստորև հրապարակվող այդ նույն նամակում Դ. Անանունը Կ. Միքայելյանին ակնարկում է, որ նա իր դժգոհությունների մասին կարող է հայտնել նրանց: Կարծում ենք՝ այդ քայլն անհետևանք չի մնացել, ու որոշ ժամանակ անց անակնկալ կերպով նրա աքսորավայրի փոփոխության հարցում Ա. Հովհաննիսյանը վճռորոշ դեր է ունեցել, թեև Դ. Անանունը կարծում էր, թե կատարվածն իր ընկերներ Կ. Միքայելյանի կամ Ն. Տեր-Մանվելյանի ձեռքի գործն է: Պատահական չէ, որ Դ. Անանունի՝ Կ. Միքայելյանին ու Ն. Տեր-Մանվելյանին ուղղված և ստորև հրապարակվող նամակները գտնվել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետև՝ Մատենադարան) պահվող Ա. Հովհաննիսյանի անձնական արխիվում¹:

Դ. Անանունն ու Ա. Հովհաննիսյանը վերջին անգամ հանդիպել են 1940 թ.*: Ըստ պատմաբան Նորայր Սարուխանյանի՝ Ա. Հովհաննիսյանն իրեն պատմել է, որ 1940 թ. աշնանը Տաշթենդի շուկայի մուտքի մոտ հանդիպել է Դ. Անանունին, ով, չինական մաշված վերարկուն հագած, մուտքի մոտ՝ ամենաբանուկ հատվածում, մի քարի վրա նստած՝ բաժակով արևածաղիկ է վաճառելիս եղել: Նրանք զրկախառնվել են ու բարձրաձայն լացել²:

Հրապարակվող ութ նամակներից յոթն առաջին անգամ են լույս տեսնում, իսկ 1916 թ. սեպտեմբերի 23-ինը ոչ ամբողջությամբ հրապարակվել է 1984 թ.՝ Գրականության և արվեստի թանգարանի աշխատակից Գոհար Ազնավուրյանի կողմից³: Ընդ որում՝ վերջինիս չեն թույլատրել տպագրել նամակի այն հատվածը, որը կարող էր բացահայտել Ա. Հովհաննիսյանի ու Դ. Անանունի մտերմիկ հարաբերությունները: Նամակները խոսակցական, բարբառային լեզվից փոփոխվել և շարադրվել են ժամանակակից հայերենով, կատարվել են ուղղագրական ու կետադրական որոշ փոփոխություններ:

1
Աշոտ Հովհաննիսյանը Դավիթ Անանունին
ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, թիվ 71:
1915 թ., 5 դեկտեմբերի, Էջմիածին

Սիրելի Դավիթ
Ողջույն և խանդավառություն

Քո ոսկեբերան դարձվածքներից ինձ ևս մաս բաժին հանած կլինես⁴՝ լռությանս համար: Ա՛խր բան ասացիր, պատվեր տվիր, հիշում ես, իհարկե, հանձնարությունդ գրքիդ տպագրության մասին⁵:

¹ Թեև կարծում ենք, որ Կ. Միքայելյանը Դ. Անանունի դժգոհությունների մասին Ա. Հովհաննիսյանին տեղյակ է պահել հենց այդ ժամանակ, չի բացառվում նաև, որ նամակները Ա. Հովհաննիսյանի ձեռքն են ընկել Կ. Միքայելյանի մահից հետո, երբ նրա արխիվը բաժին է հասել Ա. Հովհաննիսյանին: 1990 թ. Ա. Մաղոյանի կողմից հրապարակած վավերագրերը վկայում են, որ 1959 թ. Ա. Հովհաննիսյանը Կ. Միքայելյանի անձնական արխիվը ստացել է (տե՛ս Երեթ վավերագիր Աշոտ Հովհաննիսյանից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 1, էջ 132):

* 1940 թ. հարցում որոշակի վերապահում ունենք, քանի որ, ըստ արխիվային փաստաթղթերի, Դ. Անանունը 1939 թ. օգոստոսից Աստրախանի ճամբարում է եղել: Տե՛ս Հակոբյան Վ., Դավիթ Անանուն, Ե., 2020, էջ 159-161:

² Սարուխանյան Ն., Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին: Ծննդյան 125-ամյակի առթիվ, Ե., 2012, էջ 65:

³ Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1984, թիվ 1, էջ 173-174:

⁴ Ա. Հովհաննիսյանը նկատի ունի, որ իրեն հայիոյել է: Դ. Անանունին լավ ճանաչող դաշնակցականներ Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյան) և Եղիշե Իշխանյանն իրենց հուշերում գրում են, որ նա սիրում էր հայիոյել:

⁵ Խոսքը վերաբերում է Դ. Անանունի «Թուսահայերի հասարակական վարձացումը» եռահատորի առաջին հատորին, որը լույս է տեսել Բաբվում 1916 թ.:

Կարող ես վստահ լինել, որ քո հանձնարարությունը նույնքան անմոռանալի է եղել ինձ, որքան և քո դեմքը՝ պայծառ ու լուսեղ: Միայն թե այստեղ տպագրական թուղթ չկար և տպագրական վարչ. նախագահը շաբաթներով այդ իսկ պատճառով գնացել է Թիֆլիսում նստել: Նոր վերադարձավ և ես հնարավորություն ունեմ ավետել քեզ, որ այս երկու օրը այստեղ թուղթ կստացվի. ուստի և կարող եմ ընդունել քո պատվերը: Ահա և պայմանները: Գիրքը կշարվի «Արարատի» մեծ տառերով (N 12). 30 x 40 տառ, տպագրական թերթը՝ 12 ռուբլի: 1200 օրինակի վրա կգնա մոտ 15 ստոպ, մի թերթից դուրս կգա 32 էջ: Եթե տպագրվի հասարակ ֆինլանդական թղթի վրա, յուրաքանչյուր ստոպը կարժենա՝ 11 ռ. 50 կ. թուղթ: Ընդամենը կգնա 172 ռ.50 կ. թուղթ: Բրոշյուր կապելու և երեսի թղթի վրա կգա մոտ 25 ռ. ծախս: Հաշվելով այդ բոլորի վրա տպագրության ծախս 156 ռ. (13 տպ. թերթ, 12 ռուբլով՝ յուրաքանչյուր թերթը) ընդամենը՝ գիրքը կնստի՝ 353 ռ. 50 կ.: Եթե տպագրել 1000 օրինակ՝ մոտ 25 ռուբլով ավելի քիչ: Չգիտեմ, ձեռնտու է արդյոք քեզ այս հաշվով գիրքը այստեղ տպագրել տալը: Եթե այո, խնդրում եմ ուղարկիր ձեռագիրդ, որպեսզի քանի թղթի պաշարը դեռ չի սպառվել, տպագրել տանք գիրքը: Համենայն դեպս շուտ պատասխան գրիր. ի նկատի ունեցիր, որ այստեղ գրած գները, ի նկատի առնելով իմ միջամտությունը, Էժան են նշանակված սովորականից:

Ձերն բարևներ քեզ՝
Քո Աշոտ Հովհաննիսյան

2

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, թիվ 72:
1916 թ., 23 սեպտեմբերի, Էջմիածին**

Սիրելի Դավիթ!

Քո տողերը լի գայրույթով, բայց դեռ ոչ՝ ատելությամբ, կարդացի: Այդպիսի գայրույթից հետո գերեզմանիս վրա խաչ տնկել թերևս ցանկանաս, սակայն «թթել» նրա վրա դեռ չես կամենա: Այդքան բարեկամական հոգատարություն դեպի իմ աղանդավոր հոգին սպասել քեզնից, իհարկե, միշտ էլ կարող էի:

Քանի որ դու այդքան բարի ես և ուշադիր, պետք է որ լսես նաև իմ խոստովանանքը և հավատամքը: Խոստացել էի քեզ աշխատակցել «Գործին»¹ և ես կկատարեի իմ խոստումը, եթե խմբագրության «համբերատարությունը» դեպի իր աշխատակիցները չստանար այդքան տարօրինակ չափեր, նման դեպքերում համբերատարությունը «անտարբերության» է վերածվում միայն: Թերթերում տպած հայտարարությունը կասկած չէ թողնում, որ նոր ամսագիրը պետք է բերան դառնա «բոլոր հայ գրողների» անխտիր: Յուրաքանչյուրը դրանցից կարող է զետեղել տալ իր անունը ձեր աշխատակիցների ցանկում: Ես չգիտեմ և ոչ մի լուրջ գրական ձեռնարկություն, որ այսքան պլակատային բնավորություն տար իր հրապարակական դիմումներին: Իր գրիչը հարգող և իր հասարակական արժանիքն ըմբռնող գրողը չի կարող հանգիստ գտնել այդպիսի մի խառնարանում: Հրապարակի վրա է առայժմ խմբագրության «հավատը» միայն, որ ինձ չի համոզում ոչնչով: Պետք է ցավել այսուամենայնիվ, որ այդ «հավատով» ներշնչված մարդիկ ավելի դոգմատիկ են, քան այն «աղանդավորները», որոնք հրապարակ են բերում համենայն դեպս իրանց քննական դիտողությունները միայն:

¹ Դ. Անանունը «Գործ»-ին աշխատակցելու համար Ա. Հովհաննիսյանին դիմել է մինչև դրա հրատարակումը՝ նախապատրաստական փուլում: «Գործ» գրական, գիտական, հասարակական-քաղաքական ամսագիրը հրատարակվել է 1917 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին (12 համար): Այն որևէ քաղաքական ուղղության չի պատկանել: Ունեցել է հատուկ խմբագրական կազմ (դեկավար՝ Կոստ. Կրասիլնիկյան, հրատարակիչ՝ Սարգիս Տեր-Ղապարյան, անդամներ՝ Դ. Անանուն, Եր. Թադիանոսյան, Յ. Խանսպուրյան, Հ. Մանանդյան, Արտ. Չիլինգարյան), որն այդպիսի լիապորություն է ստացել նախաձեռնող մտավորականների ընդհանուր ժողովի կողմից: (Տե՛ս «Գործ», Բազու, 1917, թիվ 1, յուրուար, էջ 165-166): «Գործ»-ի շուրջ համախմբվել են տարբեր քաղաքական հայացքներ ունեցող և չեղոք մտավորականներ: Այն 1910-ական թթ. սկզբներին հրատարակված «Գարուն» ամսանախի ժառանգորդն էր:

Անունները, իհարկե, կարևոր չեն. կապրենք ու կտեսնենք «Գործը»: Եվ եթե համոզվեմ, այնուհետև, թե սխալվում եմ, կշտկեմ իմ սխալը՝ ելակետ ընդունելով ոչ թե ձեր ոչնչի չպարտավորացնող հավատը, այլ այդ հավատով ներշնչված իրական գործը: Վաղուց է չես երևում թերթերում: «Մշակը» չորացավ առանց քեզ. տարաբախտաբար ոչ միայն «Մշակը», այլև «Հորիզոնը», այդ «չբեր կիևր» կայտառանում էր գոնե, երբ առիթ էր հանդիսանում նիզակներ ճոճել քո դեմ: Վերջերս «Հորիզոնում» գրեց քո մի քանի մտքերի դեմ Հակոբ Մանուկյան անունով մի պարոն: Գիտե՞ս ով է սա. մեր ճեմարանում սովորողներից մեկը: Կարդացող, հետաքրքրվող տղա է. բայց, իհարկե, դեռ քիչ բան է մարսել: Տեսեսագիտությունից դեռևս էս տարի պիտի դասախոսություններ լսի ինձ մոտ: Մարքսի մասին հայտնած նրա մտքերը զավեշտական էին: Капитал-ը կարդացել է, բայց դեռ չի հասկացել: Վարանոյանը¹ նրանից ավելի լավ չէ ըմբռնում տնտեսական խնդիրները, ուստի և տպագրում է նրա հայտնած բոլոր հիմարությունները (օր. հավել, արժեքի ծագման մասին): Չարժե, իհարկե, որ դու արժանացնես ուշադրության աշակերտական այս մարզանքները: Որպես նրա ուսուցչի՝ այդ նեղությունը ինձ կարող ես թողնել:

Պողոսը² գնաց «Երևան», մտավ թեմ. դպրոցը: Ոչ մի կերպ հնարավոր չէր պահել նրան այստեղ: Տեսուչը մեղավոր գտնվեց մասամբ. մասամբ էլ ինքը կամակորություններ արեց: Մեջտեղ տուժողը եղավ դպրոցը: Դժվար թե հաջողվի Մակինցյանին արժանի հաջորդ գտնել: Մեր «Ֆրակցիան» մեռավ, մնացի մենակ «շանուգյուլի ըռըխըմ»:

Գիրքդ ուղարկիր: Եթե ուղարկես գրքիցդ մոտ 20 օրինակ էջմիածին՝ հուսով եմ, կկարողանամ վաճառել, միայն թե շատ չուշացնես: Հաղորդի՛ր քո հասցեն:

Լե՛ր ողջ
Բո Աշոտ

3

**ԳԱԹ, Դ. ԱՆԱՆՈՒՆԻ ՖՈՆԴ, ԹԻՎ 73:
1916 թ, 30 սեպտեմբերի**

Պայծառակերտ իմ Դավիթ, շնորհակալ եմ գրքիդ համար³: Հուսով եմ, կստանաս շուտով նաև քո носилка-ն: Մոտիկ ապագայում ժամանակ կունենամ խորասուզվելու գրքիդ ընթերցանության մեջ: Եկող տարվանից այդ աշխատությունը կմտցնեմ 6 դասարանի լսարաններում, որպես ձեռնարկ հայոց նոր պատմության: Մնում է, որ շարունակես ամփոփել կյուրերդ և տաս մեզ աշխատությանդ Բ. հատորը: Կարդացի «Արևի» հոդվածաշարքը⁴: Բավական չէ, որ այդ կարճամիտները իրենք են տրաքում նախանձից և չարակամությունից, հիմա էլ, խաղալով մեր մարդկային թուլությունների վրա, կամենում են մեզ վարակել նույն ախտով: «Արարատի» հետևյալ N-ում խմբագիր Գյուլտ աբեղան տպագրելու է գրախոսական⁵. այսօր տպարանում կարդացի, ձեռագիրը ամբողջովին հյուսված է տկարամտությունից: Դասեր է տալիս քեզ, թե ինչպես պետք է սովորես կարդալ և գրել հայոց լեզվով, սիրես ազգը ու եկեղեցին, պաշտես նրա մեռած ու կենդանի ֆետիշներին... Եվ այդ բոլորից

¹ Խոսքը հայտնի դաշնակցական գաղափարախոս Միքայել Վարանոյանի մասին է:

² Խոսքը գրականագետ, սպեցիֆիկ, հետագայում բոլշևիկ Պողոս Մակինցյանի (1884-1938) մասին է: Խորհրդային շրջանում նա պատկերվել է տարբեր պաշտոններ. 1921 թ. գարնանից՝ ներքին գործերի ժողկոմ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1921 թ. սեպտեմբերից՝ ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ, 1922-1924 թթ. դիվանագիտական աշխատանք է կատարել Կ. Պոլսում, 1925-1927 թթ.՝ Միլանում և Փարիզում: 1929 թ. Արմենտորգի տնօրեն էր, իսկ 1932 թ.՝ Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմի լիազորի տեղակալը: Նա 1936 թ. ձերբակալվել է, իսկ 1938 թ. հուլիսի 18-ին՝ դատապարտվել մահապատժի: Արդարացվել է 1955 թ. նոյեմբերին:

³ Ա. Հովհաննիսյանը նկատի ունի Դ. Անանունի՝ վերոհիշյալ առաջին հատորը:

⁴ Խոսքը վերաբերում է դաշնակցական Վահան Նավասարդյանի կողմից Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական պարզացումը» աշխատության առաջին հատորի վերաբերյալ գրած գրախոսությանը: Տե՛ս «Արև», Բազու, 1916, թիվ 209, սեպտեմբերի 22, էջ 2, թիվ 210, սեպտեմբերի 23, էջ 3, թիվ 211, սեպտեմբերի 24, էջ 3, թիվ 212, սեպտեմբերի 25, էջ 3-4:

⁵ Գրախոսականը լույս է տեսել «Արարատ»-ի 1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարում (տե՛ս էջ 753-763):

հետո եզրակացություն, որ դու հետևում ես... Լեոյի և Երիցյանի մեթոդին: Այս մարդը տարիների ընթացքում կարդացել և գրել է հայերեն, սիրել և պաշտել է ազգային սրբությունները և այնուամենայնիվ պատմաբան չի դառել, թեկուզ հենց Երիցյանի շկոլային պատկանող, այլ արեղա հոգով ու մտքով: Երևի լսել է, որ ամուրի ես, ուզում է թեզ համար ևս գայթակղության դուռ բանալ:

Ըչ-տ բարձր պահիր, սիրելի Դավիթ!, Թքի՛ր սրանց գերեզմանների վրա և անցի՛ր: Չերմ բարևներ քո Աշոտ:

4

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, թիվ 74:
1917 թ., 24 հունվարի, Էջմիածին**

Սիրելի Դավիթ!

Կարդացի նամակդ և ահա պատասխանում եմ: Եվ քանի որ նոր ենք մտել մեր հարաբերությունների ռոմանտիկական շրջանը, թույլ տուր ինձ ևս լինել սրտաբաց ու բացատրվել թեզ հետ նախ և առաջ սիրո մեջ:

Գաղտնիք չէ իմ բարեկամների համար, որ եթե կա մեկը իմ համախոհներից, որ եղել է իմ սիրո և հարգանքի մշտական առարկան՝ դա հենց քո լուսաթաթախ անձնավորությունն է: Դեպի թեզ ունեցած այդ վերաբերմունքին հիմք է եղել նախ և առաջ այն գիտակցությունը, որ ներկայումս ապրող հայ հրապարակախոսների մեջ դու միակն ես, որ ունես քո պաշտոնին վայել և՛ բնական ձիրք, և՛ բարոյական կշիռ: Սիրով ու հետաքրքրությամբ եմ կարդում քո բոլոր գրությունները և գոհունակության զգացումով հետևում քո աճող գրական ճաշակի և ունակությունների ծավալմանը: Յատկապես գնահատելի եմ համարում քո գրություններն այն պատճառով, որ մեր հոսանքին պատկանող մտավորականներից ոչ ոք այնպես սերտորեն չի կապված մեր աշխարհայացքի սոցիալական ձեռակերտների՝ արդյունաբերական դեմոկրատիայի հետ, որքան հենց դու: Ես միայն զայրանալ կարող էի, երբ քո մի քանի մեղքերի վրա ծանրանալուց հետո, մեր շարքերից թեզ մնաս բարով ուղղեց... Գ. Պիճիկյանը. ավելի քան ծիծաղելի էր այդ տղայական ժեստը: Մեզանից յուրաքանչյուրի առնչությունը հայ սոցիալական դեմոկրատիայի հետ ունի նախ և առաջ գրական-իդեական ծագում, միջդեռ քո կապը նրա հետ ռեալ է ու կենսական, մեր հայացքները հարուստ են նախ և առաջ հետամնաց տարրերով և կազմակերպվել են կողմնակի ազդեցությունների ներքո, մինչդեռ քո համոզումները ինքնաբուխ են և կաղապարվել են փորձի և պայթարի մեջ: Մեր մեջ ոչ ոք չէ կարող պատկանել Հայ բանվորական շարժմանը և Հայ սոցիալիստական մտքի պատմությանն այն չափով, ինչ չափով դու ես պատկանում դրանց: Պատահական երևույթ չէ անշուշտ, որ դու առաջինն ես սոցիալիստորեն մտածող Հայ մտավորականներից, որ լուրջ ձգտում է ցույց տվել դնել Հայ հետևողական դեմոկրատիայի հասարակական իդեալը նրա «գոյության ինքնօրինակ պատվանդանի վրա». այդպես եմ ուզում ըմբռնել քո վերջին աշխատության իսկական նպատակը:

Բայց ես բավականանում եմ այդ խոստովանությամբ և դրանով էլ չափավորում իմ սիրային հափշտակությունը: Զեզ հետ միասին հարելով միանգամայն այն հոսանքին, որ կոչում ուներ հաղթահարելու հայ մարքսիզմի զարգացման բացառապես լուսավորչական շրջանը և չբավականանալով հայ սոցիալիստական մտքի այն հին հոգևոր կացարանով, որ կառուցվել է սիմպլ դատողությունների ու անալոգիան որպես ապացույց ճանաչող մտածողության աղյուսներով՝ ես հարկադրված եմ հիշեցնելու թեզ, որ մեր նախորդներից մեզ տարբերողը պետք է լինի այնուամենայնիվ ոչ թե հին տեսակետն ու ուղղությունը, այլ նոր մտածելակերպն ու երուդիցիան: Եթե մեր գործերը պետք է դառնան ավելի նշանակալից, քան այն, ինչ արել են մեզանում մեր նախորդները, անհրաժեշտ է, որ մենք կազմակերպվենք որպես հայ անցյալի ու ներկայի խոր և բազմակողմանի ճանաչողությամբ ղեկավարվող մի ուժ: Սակայն մեր գիտակցության «ազգային» այդ հիմնավորումը չպետք է բանա մեր առաջ «ազգային գիտակցության» մի նոր անդունդ. մեր նպատակն է փոխել հայ կյանքը և սեպ

խրել նրա մեջ: Փնտրելով հայ կյանքում գոյության իրական հենակետներ՝ մեր կամքը չէ ապօրինի կենակցություն հաստատել այդտեղ գործող այն ուժերի հետ, որոնց դեմ պայքարելու կոչումն ունենք մենք: Մեր մտահոգության առարկա չէ կարող լինել «Հայրենաբաղձ հայության» ազգային հավաքումը, այլ միայն ու բացառապես հայ սոցիալական դեմոկրատիայի դասակարգային հավաքումը: Հայ սոցիալական դեմոկրատիան պետք է ցույց տա, որ նա ունի հատուկ միսիա հայ կյանքի մեջ: Նա կարող է հանդես գալ որպես ազգային դասակարգ իր սոցիալական միսիայի իրագործման ճանապարհով: «Ազգաշինությունը», որպես նպատակ հայության հավաքական ջանքերի, պետք է նկատվի որպես դասակարգային պայքարի տեսակետի վրա կանգնած դեմոկրատիայի ոգուն անհարազատ մի մտահղացում: Դա մի գաղափար է՝ սխալ իր հիմքերով ու վնասակար՝ իր հետևանքներով:

Յուրաքանչյուր համակեցություն պարտավորեցնում է գիտակցաբար թե անգիտակցաբար՝ այդ միևնույն է: Յուրաքանչյուր աննպատակ գործակցություն հակառակորդի հետ կոտորում է դեմոկրատական պայքարի թափը և բթացնում նրա մտայնության դիալեկտիկական սրությունը: Այդ առումով է, սիրելի Դավիթ, որ չժխտելով հանդերձ «Գործ» ամսագրի պիտանիությունը, որպես գրական հանդեսի, չեմ կարող չհամարել այն վնասակար, որպես հասարակական օրգանի: Պաշտոնապես նա չունի ուղղություն. սակայն փաստորեն նա մի նշանացույց է հայ հասարակական տրամադրությունների մի որոշ ուղղության. նա պետք է դառնա ժամադրավայր այն բոլոր հոգևած ուղեղների համար, որոնք սոցիալական համերաշխության մեջ են փնտրում իրենց հոգեկան հանգիստը: Հրատարակած N1-ը կարծես նույնիսկ նախորոշում է ամսագրի ապագա ուղղությունը. նրա ամենաձախակողմյան հոդվածը փորձության ժամի մասին մի կատարյալ փորձություն է հայ սոցիալական դեմոկրատիայի պատմության համար: Անանունը վճռական քայլ է անում դեպի աջ և ձեռք մեկնում անհաստատ քայլերով աջից ձախ թեթևոլ Մանանդյանին [Հակոբ-Վ.Հ.]: Ի՞նչ կարող է առաջ գալ այդ երջանիկ հանդիպումից: Անշուշտ, իր անձայր մեղքերը զոջացող մի Չիլինգարյան [Արշավիր-Վ.Հ.] միայն, քանի որ բացի այդ միակ բնական սինթեզից հայ հասարակական միտքը վաղուց է, ինչ հոգևոր հանգրվան չի փնտրում ոչ Գեղամյանի [Եղիշե-Վ.Հ.], ոչ Անկախի, ոչ Ֆրանկյանի [Երվանդ-Վ.Հ.] և ոչ նույնիսկ ...մեր պատվական Բախշի Չախարիչի [Իշխանյան-Վ.Հ.] գրվածքներում: Չիլինգարյանն անկասկած «չիտակ» մարդ է և անպայման «լուրջ» մտածող մի գլուխ: Նա կարող է նկատվել որպես մարմնացումը այն նշանաբանի, որ ընտրել է իր համար «Գործ» ամսագիրը: Բայց և այնպես, արժե՞ ոգևորվել թեկուզ հենց մի այդպիսի բարի ծնունդով: Այդ նոր Մագթաղիսեն չէ համենայն դեպս այն ապահով կամուրջը, որ պետք է ձգվի հայ դեմոկրատիայի ներկա անկազմակերպ վիճակի ու նրա «հավաքման» առաջիկա հանգույցների միջև:

Աշխատակցելով հասարակական դեմքից զուրկ օրգանների մեջ՝ մենք ավելի ևս խրախուսում ենք այն անկազմակերպ վիճակը, որի մեջ գտնվում է այսօր հայ հասարակական միտքը: Ուժերի հսկայական վատնում, և ոչ մի արդյունք: Ահագին եռանդ և ուժ ենք թափում կենդանություն ներշնչելու. զառամած «Մշակի» պես մի այլանդակության՝ ու չենք նկատում, որ դրանով իսկ մեզ վրա ենք առնում պատասխանատվություն պատանի «Պայքարի» անկիրթ բարբերի ու տղայական մտածելակերպի համար: Այսօր մենք կենտրոնացնում ենք մեր ուժերը «Գործում» ու այդպիսով թուլացնում անկախ դեմոկրատական սոցիալիստական օրգան ունենալու պահանջը: Եվ այսպես անվերջ: Սխալ է կարծել, թե մեզ կհաջողվի նվաճել օտարի ստեղծած տաքուկ անկյունները: Հիշիր, թե ինչպես վարվեցին Ցոլակի ու քեզ հետ Բագվի հայ օրաթերթերը: Չպետք է ենթադրել, որ ավելի վեհանձն կգտնվեն «Գործի» ֆինանսական մագնատները: Ինչ վերաբերվում է «Մշակին»՝ մինչ այժմ դեռ չհաջողվեց «դարձի բերել» ոչ այդ թերթի խմբագրին և ոչ էլ նրա ընթերցողներին: Առաքելյանը [Համբարձում-Վ.Հ.] ամենից քիչը գերեզմանի մասին է մտածում: Նա դեռ նոր եռանդ է զգում իր մեջ ու դեռ նոր է սկսում միջոցներ ձեռնարկել միացնելու իր համախոհներին մի նոր կուսակցության մեջ: Գուցե քո անցյալ տարվա ռեցեպտները ևս առանց հետևանքի չեն մնացել Ա-

ռաբեյանի այս նոր ծննդաբերությունը արագացնելու տեսակետից: Սակայն նաև այդ դեպքում ճիշտ է, թե մարքսիստները չեն, որ շահագործում են մշակականներին, այլ, ընդհակառակը, սրանք են, որ օգտագործում են իրենց նպատակների համար նրանց գրական աշխատանքը:

Իհարկե, ես չեմ գրում այս տողերը թեզ խելքի բերելու նպատակով: Դու ունես քո ուրույն ըմբռնումները այստեղ շոշափած խնդիրների մասին և քո գործնական քայլերը միանգամայն հետևողական են քո այդ ըմբռնումների տեսակետից: Ես կամենում էի միայն հայտնել թեզ, թե գործը հիմքեր չեմ գտնում փոխելու իմ հին կարծիքը «Գործում» աշխատակցելու մասին և շատ ցավում եմ, որ դա այդպես է, քանի որ իմ ջերմ ցանկությունը կլիներ ունենալ թեզ հետ որևէ գրական ժամադրավայր, միայն թե մեր տեսակցության քաղցր ժամերը չդառնացներ օտարի դիտող հայացքը:

Հունվարի տոներին Պողոսի մոտ էի, երբ ստացվեց ու կարդացինք միասին քո նամակը: Շատ ցավեցինք, որ առիթ չպիտի ներկայանար հանդիպելու թեզ: Հիշեցինք թեզ, և ես պատմեցի Պողոսին քո այն մանկական հիշողությունների մասին, որ լսել էի թեզնից անցյալ տարի Բագվում. մեծ շենում ձեզ հարևան ապրող այրի կնոջ («խասա») մարդու գնալու պատմությունը, որ շատ զվարճություն պատճառեց:

Ազատ ժամերս պարապում եմ մի շատ կարևոր կյուրթի վրա: Մտածում եմ մի ուսումնասիրություն հրատարակել տաճկահայերի հասարակական, տնտեսական զարգացման մասին՝ օսմանցիների տիրապետության ժամանակաշրջանում: Թեման դժվար լինելուց զատ զգում եմ կյուրթի պակասություն ևս, եղած կյուրթերն էլ սարսափելի կերպով ցրված են հայ ու օտար հրատարակությունների մեջ: Հայ հիշատակարանները քիչ բան են տալիս: Երևի հարկադրված պետք է լինեմ հիմնավորել իմ տեսությունը հին ու նոր ճանապարհորդությունների ու նման օտար հրատարակությունների տվյալներով:

Խորեն Լորենցը հասավ Էջմիածին: Երեք նամակ էր բերել ուղղված ինձ, Ալթունյանին և Սիմ. Հովոյանին. միամտաբար այդ երեքն էլ հանձնեց մեզ միաժամանակ, այն էլ՝ ուսուցչական սենյակում... ծիծաղելի վիճակի մեջ ընկավ թե ինքը, թե մենք: Նրա հարցը դեռ չի քննված: Կաշխատեմ օգտակար լինել նրա գործին: Ընդունիր առայժմ ջերմ բարևներս և ներիր, եթե նամակով թեզ վշտացնում եմ:

5

Դավիթ Անանունը Կարեն Միքայելյանին

**Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244²¹, վավ. 86:
1928 թ., 31 մայիսի, Իլինո գյուղ**

Սիրելի Կարեն¹

Օգտվում եմ հիշողությանս մեջ մնացած այս պատահական և կարծեմ անճիշտ հասցեով թեզ գրելու համար: Նախ շնորհակալ եմ թեզնից և Նիկ. Տեր-Մանվելյանից², որ մնունդ հասցրիք ինձ Մոսկվայի բանտում: Վիճակս իրոք աննախանձելի էր: Ապա եթե նամակս թեզ հասավ բաժանորդագրվիր ինձ համար “Правда” թերթին մինչև տարվա վերջը: Ստիպված եմ «մեծապատիվ մուրացկան» դառնալ: Այդպես դասավորվեց իմ կյանքը: Հավանորեն ուրիշ խնդրանքներ էլ պիտի ունենամ, եթե միայն թեզնից երկտող ստանամ և հասցեդ ունենամ: Այժմ պարզված է իմ վերջնական բնակավայրը: Դա Իլինո գյուղն է, որ գտնվում է Օբ

¹ *Նամակներն ուղղված են գրող, թարգմանիչ, նախկին սպեցիֆիկ Կարեն Միքայելյանին (1883-1942):*

² *Նիկողայոս Ստեփանի Տեր-Մանվելյանը ծնվել է 1879 թ. Շամախիի Սաղյան գյուղում: Սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, բայց բարձրագույն կրթությունը կիսատ է թողել: 1900-ական թթ. սկզբին աշխատակցել է «Մուրճ» թերթին: Տարբեր տվյալներով մինչև 1908 կամ 1914 թթ. եղել է Հնչակյան կուսակցության անդամ: Երկար տարիներ ապրել է Մոսկվայում, ապա՝ 1936 թ., տեղափոխվել Երևան և որպես թարգմանիչ աշխատել Պետհրատում: 1941 թ. հունիսի 29-ին նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ մասնավոր կրուցներում կուսակցությանը և կառավարությանը քննադատելու համար: ՆԳՄՀ Հատուկ խորհրդակցության 1942 թ. մայիսի 27-ի որոշմամբ՝ հինգ տարով աքսորվել է Ղապախստան: Հետագա ճակատագիրն անհայտ է: 1960 թ. սեպտեմբերի 28-ին նրա դեմ հարուցված գործը բեկանվել է (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 99, թ. 1-2, 4, 8, 28-29, 38, 174, 187-188):*

գետի վրա, Տոմսկ քաղաքից 540 վերստ դեպի հյուսիս, իսկ Նարիմ ավանից 46 վերստ դեպի հյուսիս: Մի աննշան գյուղակ է, 50 տնից բաղկացած: Մանրամասն կգրեմ, եթե թեզից նամակ ստանամ: Հասցեն՝ փոստային՝ Сибир. Томский округ, Давид Тер Даниелянц, հեռագրական՝ Нарым Ильино, Д.Тер.Дан.

Ահա այժմ այսքան: Ողջ եղիր:

Համբույրներով քո Դավիթ

6

**Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244²¹, վավ. 87:
1928 թ., 5 հուլիսի, Նարիմ երկիր, Իլինո գյուղ**

Սիրելի Կարեն

Քեզ նամակ գրելու երկրորդ փորձն է սա: Հասցեդ չգիտեմ և ստիպված եմ պատեպատ ընկնել: Մի նամակ եմ գրել թեզ Հայաստանի մշակույթի տան անունով*: Այս նամակն էլ փորձում եմ ուղարկել մի աքսորականի Մոսկվայի հասցեով: Ինքն այստեղ է, կինը Մոսկվայում: Այդ կինը պիտի հասցնե թեզ նամակս: Իմ վիճակում ախորժեղի բան չէ գրելը, նույնքան անախորժ է ստանալը: Այսպես է դասավորվել դրությունը: Բայց չեն նստում ուղտը և կուզեկուզ շրջում: Գաղտնիք չէ, որ Մոսկվայում դու և Նիկողայոսը ձեռք մեկնեցիք ինձ: Այդ ժամանակ վատթարագույն սննդի պատճառով ես ընկճվել էի հիվանդության ճիրաններում: Կհավատաս, որ հավկուր էի դարձել և մի քանի քայլի վրա իրերը աղոտանում էին աչքիս: Քեզ ու Նիկողայոսին շնորհակալություն եմ հայտնում, որ գոնե վերջին երեք շաբաթը տանելի դարձրիք իմ կյանքը: Ինձ սնունդ էր ուղարկում վերջին 2 շաբաթը և Փարվանյանը, որը հավանորեն կապ էր հաստատել եղբորս որդու հետ: Այդ Փարվանյանին նույնպես շնորհակալություն հայտնիր: Նրա հասցեն նույնպես չգիտեմ. նրան էլ անձանոթ եմ:

Այժմ, սիրելիս, թեզ գլխացավանք և նեղություն եմ պատճառում ուրիշ խնդրանքներով: Այս գյուղը, որ ես եմ ընկել, մի մտքից մոռացված, աչքից հեռացված անկյուն է: Նա գտնվում է Օբ գետի վրա, Տոմսկ քաղաքից 540 կիլոմետր դեպի հյուսիս: Քարտեզի վրա կարելի է գտնել Նարիմ ավանը. իմ բնակած Իլինո գյուղը այդ Նարիմից 46 կիլոմետր դեպի հյուսիս է: Գյուղը փաստորեն մի կղզի է, շրջապատված Օբ գետի ջրերով: Այդ կղզին գոյացել է անասունների արտաթորություններից: Կղզին ավելի անձուկ տեղ է բռնում, քան Մոսկվայի Բուտիրկի բանտը: Այս կղզու վրա կուչ են եկել 50 տուն գյուղացիներ, նրանց անասունները և մենք տարագիրներս: Տեղացիները ապրում էին անասնապահությամբ և ձկնորսությամբ, խոտ քաղում էին անտառներում: Անտառը տալիս է և ապրուստի մյուս միջոցները, ամենից առաջ կիդր կոչված մանր ընկույզը: Գյուղացիները հեզահամբյուր և բարեմիտ մարդիկ են, անչար բնազդներով: Համոզված եմ, որ անախորժություն չպիտի տեսնեմ նրանցից: Բայց անախորժությունը սպառնալիքի պես կախված է բնությունից: Տուրտ երկիր է Նարիմը: Առանց մուշտակի այստեղ անհնարին է ապրել: Եվ ահա խնդրում եմ թեզ մի ոչխարենի (овчанка) ուղարկել ինձ: Այստեղ, այս մոռացված անկյունում, անհնարին է ձեռք բերել: Իմ խնդրած ոչխարենին այդտեղ Մոսկվայում կոչվում է ըմմանովկա (романовка): Այդպես են ասում գիտցողները: Դա հատկապես ներքին նահանգների գործ է համարվում: Իմ խնդրած ըմմանովկան կտորով չի ծածկված, ներկված քուրք է: Ցանկալի է ինձ համար, որ նա օձիք ունենա, մորթե օձիք: Գիտցողները այդպիսի ըմմանովկային 50-70 ռուբլի գին են տալիս: Այդ գումարը բարի եղիր քո միջոցներից հոգալու: Եթե նյութապես տկար վիճակ ես ապրում, ապա աջակցություն խնդրիր Նիկողայոս Տեր-Մանվելյանից: Երկուսիդ վրա եմ բարդում այդ ծախքը: Մուշտակի հարցը հրատապ բնույթ ունի: Օգոստոսին նա պիտի այստեղ լինի: Սեպտեմբերի վերջից, գուցե հոկտեմբերի կեսից, այստեղ հաղորդակցությունը խզվում է դրսի աշխարհի հետ միևնույն դեկտեմբերը, երբ ջրերը սառչում են և սահնակները գործի են ընկ-

* Թերևս, խոսքը վերաբերում է Հայաստանի մշակույթի տան վերածված Լապարյան ճեմարանին:

նում: Օգոստոսի 15-ից ցուրտ է ... և շտապիր քո պատասխանով: Մյուս խնդրանքս ինձ առանց մտավոր սննդի չթողնել: Բարի եղիր դու և Նիկողայոսը "Правда" թերթը ուղարկելու: Պարբերականներից այսբանը բավ է: Գրքերի հարցն է դժվար: Նախ խնդրում եմ ուղարկել հայոց պատմության և գրականության մասին եղած ռուսերեն գրքերը ("Сборник Арм. Литератур" ред. В. Горького, "Поэзия Армении" ред. В. Брюсова, Летопис-Брюсова և այլն): Այստեղ կան ռուս, հրեա և վրացի աքսորականներ, որոնք ձգտում ունեն ծանոթանալու հայոց պատմության և գրականության հետ: Այդ գրքերը անհրաժեշտ են նրանց համար: Ինձ համար պետք է ընտրել պատմական աշխատություններ հատկապես: Անչափ ուրախ կլինեմ, եթե ստանայի Испарт-ի, Общество Полит-каторжан и ссыльно-поселенцев-ի, красная летопис-ի, Было-ի և նման հրատարակչական ձեռնարկությունների գործերը: Եթե ձեռքիս տակ բավարար նյութ ժողովվեց, ապա կձեռնարկեմ գրել ռուսական հեղափոխության մասին մի աշխատություն: Երկու տարուց ավելի պիտի մնամ աքսորում (ինձ հայտնեցին, որ աքսորվում եմ երեք տարով հաշված ձերբակալության օրից, այսինքն 1927 թ. հուլիսի 28-ից) և սա բավական միջոց է մի լավ աշխատություն պատրաստելու համար: Նման աշխատության կարիքը միշտ զգացվելու է: Գործը պիտի սկսել նախորդ դարի սկզբից գոնե: Ուրեմն պահանջվում են շատ նյութեր: Արդյոք կարո՞ղ կլինես հոգալու այդ բոլորը: Քեզ կարող է աջակցել և Քաղաքական Կարմիր Խաչը (Մ.Գորկու կինը Եկատերինա Պավլովնա Պեչկովա, հասցեն Кузнецкой мост, N 24): Տիկին Պեչկովան գրքեր ուղարկում է աքսորականներին: Մի հրեայի նա գրականություն է ուղարկել և երբայերենի փոխարեն հայերեն գրքեր դրել կապոցում: Այդ գրքերը ինձ տվին: Աննշան բաներ էին: Կար նույնիսկ կրոնի դասագիրք: Գրքերից մեկը Վ. Տերյանի բանաստեղծությունների հատորն է («Պանթեոնի» հրատ): Զեղի-Նակը նվիրել է ոմն Михаил Осдерович Ларионов-ի (Մոսկվա, 1912, IV I): Գիրքը հիմա սեղանիս վրա է: Այս միջանկյալ զրոյցից նորից գրքերի խնդրին եմ դառնում: Բարի եղիր ինձ մտավոր սնունդ մատակարարելու: Կարծում եմ, որ այս դեպքում քեզ օգտակար կարող է լինել և Փառանձեմ Կնունյանցը (այժմ, լսել եմ, Սիրիբրովկայա): Նրան բարևներս հաղորդիր և գրքեր պահանջիր: Էլ ինչ գրեմ: Գրիր քո վիճակի մասին: Աշխատանք ունե՞ս արդեն: Նիկողայոս Տեր-Մանվելյանին բարևներս հաղորդիր: Նրան առանձին նամակ չեմ գրում: Թող համարի, որ այս նամակը գրում եմ նաև իրան: Ողջ եղիր:

Քո Դավիթ

Հասցես՝ Сибирь, Томский округ, Наримский край, село Ильино, Давид Тер Даниелянц...

7

**Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244²¹, վավ. 88:
1928 թ., 25 օգոստոսի, Իլինո գյուղ**

Սիրելի Կարեն

Օգոստոսի 1-ից ստանում եմ "Правда" թերթը: Երեկ էլ բացիկ ստացա Նիկողայոսից, որով հաղորդում է, թե ինքը և դու նկատի եք առել իմ դիմումը: Ձեր վերաբերմունքը ինձ սփոփում է, երբ մանավանդ հիշում եմ, թե ինչպես վարվեցին ինձ հետ Թիֆլիսի իմ բարեկամները: Ձերբակալվեցի հուլիսի 28-ին: Առավոտյան ժամը 8 1/2-ին ինձ մոտ մտավ մի հայ երիտասարդ, հայտնեց, թե ինքը Չեկայի աշխատակից է և Չեկայի նախագահի ցանկությունն հայտնեց նրան տեսնելու «ինչ որ զրոյցի համար», որ պիտի աներ ինձ հետ: Միասին գնացինք: Չեկայում երկար սպասեցի նախագահին: Նրան չտեսա: Վերջը ինձ հայտնեցին, որ ձերբակալված եմ: Երիտասարդ հայը դուրս եկավ քննիչ: Նրա միջոցով երկու անգամ գրություն ուղարկեցի Տիգրան Իսախանյանին*, որ մտնի բնակարանս, վերցնի իրերս և ինձ

* Տիգրան Ավագի Իսախանյանը ՄԴԲԿ հիմնադիրներից է, մասնագիտությամբ՝ բժիշկ: Նրա վերաբերյալ Հովհաննես Թումանյանի որդի Համիկը 1937 թ. Պ. Մակինցյանի քրեական գործի շրջանակներում տված իր ցուցմունքում նշում է, որ մի ժամանակ եղել է Անդրերկրկոմի ժողովմիսարիատի և Անդրերկրկոմի բժիշկը: Մոտ

համար ճերմակեղեն ուղարկի իմ ունեցածից: Եվ ոչ մի պատասխան: 15 օր պառկեցի մերկ տախտակի վրա: Քրտինքի և կեղտի մեջ կորել էի և հիվանդացա: Բժիշկը չտեսնելով ճերմակեղեն՝ զարմացավ: Դրանից հետո քննիչը գնաց և բերեց անհրաժեշտ իրերը: Հետո հիվանդանոց փոխադրեցին: Այստեղ իմ անօգնական վիճակում Թիֆլիսի պարոնները մոտ չեկան և Չեկայի աշխատակցին մնաց հոգալու իմ կարիքները: Վերջը հասան օտար հայրենակիցներ, որոնք սկսեցին սնունդ բերել և ճերմակեղենի հոգսը քաշել: Կարող ես երևակայել, որ նոր ճերմակեղեն ստանալու դեպքը զուգադիպեց այն պահին, երբ Բագվից եկավ իմ եղբորս որդին, այնինչ ես Տիգրանի ու Նարիմանի* բնակարաններից երկու քայլի վրա էի ապրում և ճերմակեղենի պաշար ունեի: Այդ պարոնները նույնիսկ տեսակցության չեկան, երբ դեկտեմբերին տեսակցությունը ազատ էր և դարաբաղցի հայրենակիցներս շաբաթը երկու անգամ գալիս էին ինձ տեսնելու: Իմ մասին հարցնողին կամ խուսափել են պատասխանելու կամ պատասխանել են, թե վաղուց ես Մոսկվա եմ փոխադրված, այնինչ ես դեռ Թիֆլիսում էի: Ավելի ստոր գտնվեցին Սիմոնիկ Փիրումյան** և Պողոս Մակինցյան պարոնները: Իմ ձեռքակալությունը մասամբ նրանց գործն է: Այս պարոնները իրենց խախտված կուսակցական դրությունը փրկելու համար ամենուրեք տարածում էին և պաշտոնական մարդկանց հավաստիացնում էին, թե ես դաշնակցական եմ դարձել և այդ կուսակցության գործակալն եմ: Անամոթ մարդիկ: Փիրումյանը խոսում էր պղծություն խոսող Չապել Եսայանի*** բերանով: Պատմեմ քեզ, որ մայիսին քեզից բաժանվելուց հետո ես Բագու գնացի և վերադարձա ու տեսակցություն խնդրեցի Մամիա Օրախելաշվիլուց****: Նա հայտնեց Բեկզառյանի միջոցով, որ գիտե իմ դիմումի իմաստը (հավանորեն իրազեկ էր արել սևերես Աշոտը), որ չի կարող անցագիր տալ Պարսկաստան հեռանալու, բայց ուրախությամբ առաջարկում է Թիֆլիս փոխադրվել, ուր ես կստանամ լավ պաշտոն: Հունիսի վերջին ես Երևանից փոխադրվեցի Թիֆլիս: Պաշտոնի խնդիրը այսօր... մնաց: Դարձյալ սկսեցին բամբասանքներ շրջել և այստեղ բռուն խանդ էին բանեցնում Փիրումյանն ու Մակինցյանը: Վերջապես պաշտոնի փոխարեն ձեռքակալություն: Ո՞րն է մեղադրանքը: Թիֆլիսում ինձ մեղադրում էին, թե ես ինչ-որ հանձնարարություն եմ տվել Գյուլտ եպիսկոպոսին, որ նա Թավրիզ է գնացել: Պատասխանում եմ, որ այդ մարդուն տեսել եմ Թավրիզից վերադառնալուց հետո, որ նա ինքն է այցելել ինձ և բարևներ բերել մի երկու մտավորականի կողմից: Սա էր ճշմարտությունը: Գյուլտը բարևից բացի որևէ խոսք ու զրույց չի ունեցել ինձ հետ: Երևանում, ուր ինձ տարան 1^{1/2} ամսից հետո, Չեկան իմ և Գյուլտի մեջ առնչություն չի տեսնում և զարմանում է, թե որտեղից են Թիֆլիսում մեջտեղ գցել այդ մեղադրանքը: Երևանում մեղադրանք նույնպես չկա: Կա բանավեճ զանազան խնդիրների առիթով, օրինակ 1) լուծված է արդյոք հայոց հարցը, 2) վերացել է արդյոք դաշնակցությունը և երբ կվերանա, 3) Փետրվարի շարժումը (1921թ.) ապստամբություն էր, թե ավանտյուրա, 4) ինչ վերաբերմունք ունեմ դեպի Հովհ. Քաջազնունին, 5) ինչու են դաշնակցականները ինձ հարգում, 6) ինչո՞ւ էի 1920 թ.

Է եղել Պ. Մակինցյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի հետ: Վերջինի հետ միաժամանակ ունեցել է ազգակցական կապ: Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 3, գ. 1710, թ. 195:

* Խոսքը վերաբերում է Նարիման Տեր-Ղապարյանին (1875/7-1938), ով ու՛ր է եղել և դաշնակցական, ապա՝ 1903 թ., դարձել ՍԴԲՀԿ հիմնադիրներից ու ղեկավարներից մեկը: Խորհրդային տարիներին տարբեր բարձր պաշտոններ է վբաղեցրել Հայաստանում: Նա 1921 թ. վբաղեցրել է սոցիալական հարցերի ժողովուրդի պաշտոնը, եղել է Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիրներից ու ակտիվ գործիչներից մեկը: 1930-ական թթ. վբաղեցրել է Անդրֆեդերացիայում Խորհրդային Հայաստանի ժողովուրդի մշտական ներկայացուցչի պաշտոնը:

** Սիմոնիկ Փիրումյանը նախկին սոցիալ-դեմոկրատ մենչևիկ է, եղել է Անդրկովկասյան Սեյմի անդամ: Խորհրդային շրջանում, որպես բոլշևիկ, վբաղեցրել է տարբեր պաշտոններ, հատկապես ակտիվ գործունեություն է ծավալել Փարիզում Խորհրդային Հայաստանի առևտրական ներկայացուցիչ աշխատելու տարիներին:

*** Չապել Եսայանը (1878-1943) արևմտահայ հայտնի արձակագիր, թարգմանիչ ու հասարակական գործիչ էր: 1930-ական թթ. վերադարձել է Խորհրդային Հայաստան, ապա դարձել ստալինյան քաղաքական բռնությունների կոհ:

**** Մամիա (Իվան) Օրախելաշվիլին (1881-1937) Խորհրդային պետական և կուսակցական գործիչ է, 1926-1929 թթ. եղել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի առաջին քարտուղարը և միաժամանակ՝ «Չարյա Վոստոկա» թերթի պատասխանատու խմբագիրը:

մայիսին և 1921 թ. փետրվարին բանտերից ազատում բուլճարի կենտրոններին, երբ նրանց հակառակորդն էի և նման բաներ: Եթե կոնկրետ մեղադրանք կար այդ բուլճարի մեջ - դա այն էր, որ ես իբրև թե ցանկություն եմ ունեցել գաղտնի արտասահման անցնելու և իբրև թե այդ նպատակով դիմել իմ դաշնակց. կոմիտեին: Իհարկե, սուտ միանգամայն: Ես երբեք մտադրություն չեմ ունեցել գաղտնի հեռանալու Հայաստանից: Ես կամեցել եմ... թողնել այդ անհյուրընկալ հայրենիքը: Վերջապես, ես 9 ամիս դեգերելով բանտերում ու նկուղներում, տեսնելով մի քանի տասնյակ դաշնակցական, - այժմ չգիտեմ, թե ովքեր են դաշնակցական ղեկավարները և գաղափար չունեմ նրանց մասին: Մյուս շինծու մեղադրանքը այն է, որ իբրև թե երիտասարդ մարքսիստները ինձնից գրական նյութեր են խնդրել իրանց կազմակերպվելիք տպարանի համար: Կատարյալ սուտ: Ես հասկանում էի, որ ես կուսակցական պայքարի զոհ եմ և այդպես էլ արձանագրել տվի: Ես պահանջեցի հրապարակային դատի տալ ինձ, թող որ ով ուզում է լինի դատավորը: Չեկան չկատարեց իմ պահանջը և Երևանից Նոյեմբերի 8-ին ճամփեց Թիֆլիս: Այնտեղից դեկտեմբերի 23-ին ինձ 82 հայի հետ Էտապով Մոսկվա բռնեցին: Իմ Էտապի ընկերները տարագրվեցին փետրվարի 24-ից սկսած: Միմիայն ինձ պահեցին բուստիրկայում մինչև մայիսի 6-ը: Ընկերներս տարագրվեցին Ռուսաստանի ներքին նահանգները և ինձ վիճակվեց Սիբիրը և այն էլ այն հեռավոր և խուլ անկյունը: Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ: Ստանում եմ «խորհրդային Հայաստանը» և տեսնում, թե ինչ կատարի իրարակերություն է տիրում երկրում: Ես որ անպարտ եմ այդ խնդրում: Հայաստանում ես աթոռ չունեի և չէի վայելում Շահումյանի ու Սպանդարյանի ժառանգությունը: Վայելողը Կարինյանի [Արտաշես] պես մարդիկ էին, որոնք ինձ մատնեցին իրանց հակառակորդներին, որպեսզի ամուր բազմեն իշխանության մեջ: Ո՞ր մնաց այդ ողորմելիների աշխատանքը, ո՞ր է նրանց վարձատրությունը: Հուլաներին այլ վիճակ չի կարող սպասել: Մակինցյանը իր գրիչը փոխել է և... դարձել: Մյուսների մասին գաղափար չունեմ, թե ուր են: Սպեցիֆիկակերությունը տուն է կատարում: Միթե Կարինյանը և մյուսները որևէ դեմք են ունեցել: Եթե նրանք դեմք ունենային, եթե նրանք խիղճ ունենային՝ կհանդուրժեին, որ 7 տարի ինձ անվերջ խաչեին և վերջն էլ մուրացիկի վիճակում Սիբիրի տանջարանը ճամփեին: Շատ միսթարական է, որ այդ ողորմելիները իրանց արժանի վարձը ստացան: Թող իշխի Կասյանը [Սարգիս] նրա մեջ ավելի տղամարդկություն կա, քան հիշածս ողորմելիների մեջ: Սիրելի Կարեն, չգիտեմ երբևիցե պիտի պատահենք իրար, որ պատմեմ քեզ բոլոր ստորությունը այդ մարդկանց: Եթե բան է ես կորչելու լինեմ այստեղ՝ հիշիր, որ ես չեմ մեղադրում Կասյան և ընկ., նրանք անազնիվ էին իմ անունով և իմ պատճառով պայքար սկսելու Հովհաննիսյան [Աշոտ] և ընկ. դեմ: Ես մեղադրում եմ այս վերջիններին: Նրանք է, որ ինձ մատնեցին իրանց հակառակորդների ձեռքը, որպեսզի իմ արյունով ձեռքից բաց չթողնեն իշխանությունը: Ահա այսքան անկում և տմարդիություն: Ո՞րն է իմ հանցանքը: Մինչև օրս ես էլ չգիտեմ: Երկար գրեցի և հոգնեցի: Ողջ եղիր: Այս նամակը քեզ կտա մի աքսորականի կին, որը դարձյալ վերադառնալու է ամուսնու մոտ: Ընդունիր ջերմ բարևներս ու համբույրս: Ջերմ բարևս ու համբույրս Նիկողայոսին: Այս նամակի բովանդակությունը հրապարակ հանի: Միայն քեզ եմ գրում: Գիտեմ, որ կատաղություն կհարուցի ստորաքարշների կողմից:

Զո Դավիթ

8

Դավիթ Անանունը Նիկողայոս Տեր-Մանվելյանին
Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244²¹, վավ. 89:
1928 թ., 2 դեկտեմբերի, Իլինո գյուղ

Սիրելի Նիկողայոս¹

Նոյեմբերի 23-ին ստացա հեռագիր Մոսկվայից հետևյալ բովանդակությամբ: Անհապաղ իմ հասցեով ուղարկիր դիմում դատախազ Հարությունյանի անունով քեզ փոխադրելու ցանկացածդ վայրը: Հեռագիրը ստորագրություն չունեի, բայց ես հասկացա, որ կամ դու

¹ Տե՛ս սույն հոդվածի՝ Նիկողայոս Ստեփանի Տեր-Մանվելյանին վերաբերող նախորդ ծանոթագրությունը:

Ես ուղարկել կամ Կարենը: Միստիֆիկացիա չեմ ենթադրում: Այժմ ուղարկում եմ այս նամակի հետ այդ դիմումը: Ես բնակության-աքսորավայրի տեղ ընտրում եմ Աստրախանը, Նկատի ունենալով, որ կարելի կլինի նյութեր ժողովել տեղի արխիվներից նորագույն հայոց պատմության համար: Ինձ մտահոգություն է պատճառում միայն այն հանգամանքը, այստեղ հնարավոր էր աչքից հեռացած ու մտքից մոռացված մի վայրում համեստ միջոցներով գոյություն պահպանել, իսկ ինչպե՞ս պիտի դասավորվեն իմ նյութական պայմանները Աստրախանում - դա անեղծվածային է: Չգիտեմ հնարավոր պիտի լինի աշխատանք գտնել թե ոչ:

Դեռ ձեզից նամակ չունեմ և չգիտեմ ինչի վերագրել այդ հեռագիրը: Փոստը միայն այսօր ստացվեց: Չկտեմբերի 15-ից մինչև այսօր մենք կտրված էինք դրսի աշխարհից: Չիմա սկսում է երթևեկությունը և հավաստիացնում են, թե փոստը կժամանի շաբաթը մեկ անգամ:

Եթե իմ փոխադրության գործը պիտի ուշանա՝ ապա չմոռանաք տետր ու գիրք հայթայթել: Եթե անգամ ես չլինեմ այստեղ՝ կան հայ աքսորականներ, որոնք կօգտվեն ուղարկվածից: Այժմ Իլինոյում ես միակ հայ աքսորականը չեմ: Այստեղ է ուղարկված և մեկ հայ, Էրզրումի նախկին բնակիչ Արմենակ Միրոյան անունով:

Ստացա Կարենի երկու գիրքը: «Մաժիստիկը» խիստ հավանեցի: Շնորհակալություն գրքերի համար: Ողջ եղիր: Բարևներ քեզ ու Կարենին:

Զո Դավիթ

Vaagn Akobyan, ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА. Публикуемые письма являются частью обширной переписки известного социал-демократа, историка марксистского толка и публициста Давита Анануна (1880-1943). Они специально выбраны для выяснения характера его отношений с известным историком, государственным деятелем, секретарем центрального комитета К(б)П Советской Армении с 1922 по 1927 гг. Ашотом Оганнесяном (1886-1972). Одновременно эти письма показывают влияние этих отношений на судьбу Д. Анануна.

Представляемые письма содержат интересные сведения о межличностных отношениях Д. Анануна и А. Оганнесяна, а также способствуют расширению наших представлений о общественно-политической жизни 1910-1920-х гг. в Армении и Закавказье.

Ключевые слова: Давит Ананун, Ашот Оганнесян, Карен Микаелян, Никогайос Тер-Манвелян, дружба, специфика.

Vahagn Hakobyan, FROM DAVID ANANUN'S LETTERS. The letters published in this article are part of an extensive correspondence of the well-known Social Democrat, Marxist historian and publicist David Ananun (1880-1943). They were specially selected to clarify the nature of his relationship with the famous historian, statesman, Secretary of the Central Committee of the Communist (Bolshevik) Part of Soviet Armenia in 1922-1927, Ashot Hovhannisyanyan (1886-1972). At the same time, these letters show the influence of these relations on the fate of D. Ananun.

The presented letters contain interesting information about the interpersonal relations between D. Ananun and A. Hovhannisyanyan, and also contribute to the expansion of our understanding of the social and political life of the 1910-1920s in Armenia and the Caucasus.

Keywords: David Ananun, Ashot Hovhannisyanyan, Karen Mikaelyan, Nikoghayos Ter-Manvelyan, friendship, specifics.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200